



Զահրատ

Վահան

Վահան մը լոյս

Վահան մ'աննիթ գոտ գաղափար բորբ հաւատք

Հպարտ փոներ են կուրծքիս

Լուտանքներուն դէմ մոլեգնած աշխարհին

Դարանակալ խժգուժութեան դէմ անգուսպ

Մինչ մայթերէն իբր թէ

Հանդարտօրէն կը քալեն

Երագատես սուրբի նման անտարբեր

Իսկութեան մէջ ես կուրծք կու տամ հագարումէկ հարուածի

հագարումէկ թշնամանքի ու դաւի

Երբ հանդիպիր դուք ինձի

Թշնամի թէ բարեկամ

Մէկուն վրայ այս քաղաքին փոշեպաճոյճ մայթերէն

Մի կարծիք թէ մինակ են

անապաւէն անօգնական կամ անէն

Դուք որ օտար չէք նշմարեր հարկաւ վահանն իմ գօրեղ

Վահան մը լոյս

Վահան մ'աննիթ գոտ գաղափար բորբ հաւատք

Չոր հպարտ

Կուրծքիս վրայ դրօշի պէս կը բռնեն